

Հ.Մ.Ը.Մ.

Արեւելեան Միացեալ Նահանգներու
Շրջան

HOMENETMEN

Eastern USA Region



Ներքին

Մարզական Կանոնագիր

Հայերէն

Internal

Athletic By-Laws

2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

	Էջի Թիվ
Ա. Շրջանային Մարզական Յանձնախումբ	2
Բ. Գործունեություն	2
Գ. Տարիքային Դասաւորում	4
Դ. Հ.Ս.Ը.Մ.-ի Անդամակցություն	5
Ե. Նաւասարդեան Խաղերու Մասնակցություն	5
Զ. Մարզական Հանդիպումներ. Վայր, Թուական եւ Ժամ	6
Է. Կասեցում կամ Պարտուած Բացակայութեան Պատճառով	6
Ը. Մարզական Տարազներ	7
Թ. Մարզադաշտ եւ Մարզական Գոյքեր	7
Ժ. Մրցումներու Կանոններ	8
Ֆութպոլ	8
Աթլէթ	9
Պասքէթպոլ	10
Վոլիպոլ	12
Փինկ-Փոնկ	13
Թենիս	14
Լոդ	14
Ճատրակ	14
Ի. Մրցանակներ	15
Լ. Մրցումներու Ներկայություն եւ Ճշդապահություն	15
Խ. Կարգապահական	15
Ծ. Բողոքարկման Ընթացակարգեր	16
Կ. Գնահատում	17
Յ. Իրաւարարներ	17
Զ. Մարզիկներու Փոխանցումներ	17
Ղ. Ընդհանուր	18

Ա.- ՇՐՋԱՆԱՅԻՆ ՄԱՐԳԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ

Յօդ. 1.- Շրջանային Մարզական Յանձնախումբը կը նշանակուի Շրջանային Վարչութեան կողմէ եւ համարատու է անոր:

Յօդ. 2.- Շրջանային Մարզական Յանձնախումբը կը հովանաւորէ եւ կը համադրէ մասնաճիւղերու մարզական աշխատանքները մասնաճիւղերու վարչութեանց կամ մարզական յանձնախումբերու խողովակով:

Օսանօթ.- Ներքին Մարզական Կանոնագիրին գործածութեան համար, Հ.Մ.Ը.Մ.-ի Միաւոր մը համագոր է Հ.Մ.Ը.Մ.-ի Մասնաճիւղի, ամէն իրաւունքներով եւ սահմանափակումներով: Միաւորի մը Վարչութիւնը համագոր է Մասնաճիւղի մը Վարչութեան:

Յօդ. 3.- Շրջանային Մարզական Յանձնախումբը կը բաղկանայ հինգ, եօթը կամ ինը Հ.Մ.Ը.Մ.-ական անդամներէ, որոնք կը կրեն հետեւեալ պաշտօններն ու պատասխանատուութիւնները.-

Ա- Ատենապետ: Կը համադրէ յանձնախումբերու անդամներու գործունէութիւնը: Կը վարէ յանձնախումբի ժողովները, եւ կը հսկէ առնուած որոշումներու ճշգրիտ գործադրութեան: Ատենապետը յանձնախումբի պաշտօնական բանբերն է:

Բ- Քարտուղար: Կը պահէ ժողովներու ատենագրութիւնները: Կը պատրաստէ ժողովներու օրակարգը: Ժողովներու ընթացքին առնուած որոշումները կը փոխանցէ առ որ անկ է: Կը կատարէ թղթակցութիւնները:

Գ- Գոյքապահ: Կը պահէ եւ կը հսկէ յանձնախումբի բոլոր գոյքերը: Կը պատրաստէ գոյքերու ամբողջական եւ այժմեական ցանկը:

Բ.- ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

Յօդ. 4.- Շրջանային Մարզական Յանձնախումբը իր առաջին նիստին կը պատրաստէ գործունէութեան ծրագիր մը, որ Շրջանային Վարչութեան կողմէ վաւերացուելէ ետք կը դրուի գործադրութեան: Յանձնախումբը կը պահէ ժողովներու կանոնաւոր ատենագրութիւնը, որմէ մէկ օրինակ կը յղէ Շրջանային Վարչութեան:

Յօդ. 5.- Շրջանային Վարչութեան ներկայացուցիչը կրնայ ներկայ ըլլալ Շրջանային Մարզական Յանձնախումբի ամէն ժողովներուն:

Յօդ. 6.- Շրջանային Մարզական Յանձնախումբի կողմէ առնուած որոշումներուն վերջին խօսքը կը պատկանի Շրջանային Վարչութեան:

Յօդ. 7.- Շրջանային Մարզական Յանձնախումբը իր կողքին կրնայ յառաջացնել ենթայանձնախումբեր, ըստ պէտքի:

Յօդ. 8.- Իւրաքանչիւր ենթայանձնախումբ կը գլխաւորուի Շրջանային Մարզական

Յանձնախումբի մեկ անդամին կողմէ:

Յօդ. 9.- Իւրաքանչիւր ենթայանձնախումբ կը պատրաստէ գործունէութեան համապատասխան ծրագիր մը, որ Շրջանային Մարզական Յանձնախումբի կողմէ վաւերացուելէ ետք կը դրուի գործադրութեան:

Յօդ. 10.- Շրջանային Մարզական Յանձնախումբը կը քաջալերէ մասնաճիւղերու վարչութիւնները ստեղծելու՝ իւրաքանչիւր մարզախաղի համար յատուկ յանձնախումբ:

Յօդ. 11.- Շրջանային Մարզական Յանձնախումբը մասնաճիւղերու մարզական յանձնախումբերը կը մղէ կազմակերպելու եւ զարգացնելու մարզական գործունէութիւնը:

Յօդ. 12.- Շրջանային Մարզական Յանձնախումբը կը կազմակերպէ միջ-մասնաճիւղային հանդիպումներ բոլոր մասնաճիւղերուն մօտ, նախընտրաբար հերթականութեամբ եւ նկատի առնելէ ետք տուեալ մասնաճիւղի կարելիութիւններն ու յարմարութիւնները:

Յօդ. 13.- Շրջանային Մարզական Յանձնախումբը կը մղէ մասնաճիւղերու վարչութիւնները ստեղծելու տողոց եւ աղջկանց մարզական խումբեր իւրաքանչիւր մարզախաղի համար, համաձայն շրջանի ներքին կանոնագրին:

Յօդ. 14.- Շրջանային Մարզական Յանձնախումբի որոշումով, իւրաքանչիւր մասնաճիւղ պարտաւոր է իր մարզիկները տրամադրել Հ.Մ.Ը.Մ.-ի ներկայացուցչական խումբին իրենց օրինաւոր կարգավիճակը դասաւորելէ ետք, որպէսզի իրենց մասնակցութիւնը բերեն համա-Հ.Մ.Ը.Մ.-ական կամ այլ Հ.Մ.Ը.Մ.-ի շրջաններու մարզախաղերուն: Շրջանային Մարզական Յանձնախումբը կրնայ փորձաքննութիւններ կազմակերպել տարբեր նահանգներու մէջ, փոխանակ մէկ նահանգի: Այս միջոցը օգտագործելու համար բաց փորձաքննութիւններ կը կատարուին Շրջանային Մարզական Յանձնախումբի եւ Վարչութեան ճշդաձ վայրերուն մէջ, իսկ ետքը շրջանային փորձաքննութիւնները կը կատարուին հրաւերով:

Յօդ. 15.- Շրջանային Մարզական Յանձնախումբը պարտաւոր է իր գործունէութեան շուրջ կիսամեայ տեղեկագիր տալ Շրջանային Վարչութեան:

Յօդ. 16.- Արտասահման խումբ ուղարկելու, կամ արտասահմանէն խումբեր հրաւիրելու համար, Շրջանային Մարզական Յանձնախումբը պէտք է ստանայ Շրջանային Վարչութեան հաւանութիւնը նախքան որոշումի գործադրութիւնը, ինչպէս նաեւ մասնաճիւղի վարչութիւնը պէտք է ստանայ Շրջանային Վարչութեան հաւանութիւնը:

Յօդ. 17.- Շրջանային Մարզական Յանձնախումբը կրնայ կազմակերպել

խորհրդակցական հանդիպումներ մասնաճիւղի մարզականյան յանձնախումբերու հետ:

Յօդ. 18.- Շրջանային Մարզական Յանձնախումբի անդամ մը, որ առանց պատճառի երեք անգամ յաջորդաբար կը բացակայի յանձնախումբի ժողովներէն կը նկատուի հրաժարած: Շրջանային Վարչութիւնը, յանձնախումբի կազմը կը լրացնէ նոր անդամ մը նշանակելով:

Յօդ. 19.- Շրջանային Մարզական Յանձնախումբը, Շրջանային Վարչութեան հետ խորհրդակցաբար, կը ճշդէ միջ-մասնաճիւղային կամ այլ մրցաշարքերու ընթացքին կիրարուելիք մարզախաղերու տեսակները:

Գ.- ՏԱՐԻՔԱՅԻՆ ԴԱՍԱԻՈՐՈՒՄ

Յօդ. 20.- Մարզիկները պէտք է լրացնեն սիրողական (amateur) մարզիկի բոլոր պայմանները, ըստ ողոմպիական միջազգային կոմիտէի եւ միջազգային մարզական ֆետերասիոններու կողմէ որդեգրուած սահմանումին:

Յօդ. 21.- Տղոց եւ աղջկանց մարզական խումբերը կը կազմուին համաձայն հետեւեալ դասաւորումին.-

Ծիլ	9 եւ աւելի փոքր
Պանդամ	10 – 12
Պատանի	13 - 15
Կրտսեր	16 - 18
Երեց	19 եւ աւելի մեծ
Վեղերան	35 եւ աւելի մեծ

Ծանօթ.- Տարիքի դասաւորումը կ'որոշուի իւրաքանչիւր մարզիկին տարիքին համեմատ մարզախաղի թուականէն առաջ:

Յօդ. 22.- Մարզիկ մը կրնայ մաս կազմել իր տարիքէն անմիջապէս բարձր դասակարգի խումբին, բացի վեղերաններու տարիքի խումբին:

Ծանօթ.- Մարզիկները իրենց տարիքէն անմիջապէս բարձր դասակարգի խումբէն աւելի բարձր դասակարգի խումբին կրնան միանալ միայն Շրջանային Մարզական Յանձնախումբին կամ Շրջանային Վարչութեան վաւերացումով, յատուկ պայմաններու ժամանակ:

Յօդ. 23.- Անգամ մը որ մարզիկ մը մաս կը կազմէ իր տարիքէն վեր խումբի մը , չի կրնար վերադառնալ իր տարիքի խումբին նոյն մարզաձեւին, բայց կրնայ վերադառնալ իր տարիքի խումբին տարբեր մարզաձեւերուն:

Յօդ. 24.- Մասնաճիւղերը պէտք է Շրջանային Մարզական Յանձնախումբին ներկայացնեն իւրաքանչիւր մարզախաղի խումբին անուանացանկը որը կարելի չէ փոխել յանձնելէ

յետոյ, խաղերը սկսելէ առաջ, ինչպէս նաեւ անուանացանկը այն մարզիկներուն որոնք իրենց տարիքէն վեր խումբերու մէջ մասնակցութիւն պիտի բերեն:

Դ.- Հ.Մ.Ը.Մ.-ի ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԻՒՆ

Յօդ. 25.- Հ.Մ.Ը.Մ.-ի մրցաշարքերուն մասնակցող մարզիկը պէտքէ ըլլայ Հ.Մ.Ը.Մ.-ի անդամ (առնուազն երեք ամիս) եւ պէտք է ունենայ Հ.Մ.Ը.Մ.-ի անդամատետր, ուր արձանագրուած ըլլայ մարզիկին պատկանած մասնաճիւղին անունը, մարզիկին անուն մականունը, ծննդեան թուականը եւ տարիքային դասակարգը :

Ե.- ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ ԽԱՂԵՐՈՒ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆ

Յօդ. 26.- Հ.Մ.Ը.Մ.-ի Արեւելեան Միացեալ Նահանգներու շրջանին բոլոր մասնաճիւղերը կրնան մասնակցիլ Շրջանային Մարզական Յանձնախումբի կազմակերպած մրցաշարքերուն:

Յօդ. 27.- Նաւասարդեան խաղերէն առաջ, իւրաքանչիւր մասնաճիւղէ պարտի \$500 կանխավճար փոխանցել մինչեւ Մարտ 1: Այս գումարը կրնայ գործածուիլ անուանացանկերու ժամանակին չյանձնուելու պատճառով, կամ խումբի այլազան տուգանքներու պարագային, կամ մասնաճիւղի անդամներէ յարուցուած կալուածներու վնասներուն: Նշուած յանցանքներու չգոյութեան պարագային \$500 կը վերադարձուի մասնաճիւղին Նաւասարդեան խաղերէն յետոյ: Եթէ մասնաճիւղը Շրջանային Վարչութեան պարտք ունի, այդ գումարը կը գործածուի պարտքը վճարելու համար:

Յօդ. 28.- Մասնաճիւղ մը պէտք է ունենայ նուազագոյնը «X» մարզիկներ որպէսզի կարենայ արձանագրել երկրորդ խումբ մը նոյն մարզախաղի նոյն դասակարգին:

<u>X</u>	<u>Մարզախաղ</u>
8	Վոլիպոլ
7	Պասքեթպոլ
15	Տուրպոլ

Յօդ. 29.- Մրցաշարքի մասնակից մարզիկը երբ չամբողջացնէ Յօդ. 25-ի պայմանները, կը զրկուի խաղերու մասնակցութենէն: Անհատական խաղերու պարագային, մարզիկը կը համարուի պարտուած: Իսկ խմբական խաղերու պարագային, խումբը կը համարուի պարտուած:

Յօդ. 30.- Շրջանային Վարչութեան վաւերացումով եւ Շրջանային Մարզական Յանձնախումբի խորհուրդով, այլ շրջաններու մարզական խումբեր կրնան մասնակցիլ մրցաշարքերուն հիւրաբար եւ յատուկ հրաւերով:

Զ.- ՄՐՋԱՇԱՐՔԵՐՈՒ ՎԱՅՐ, ԹՈՒԱԿԱՆ ԵՒ ԺԱՄ

Յօդ. 31.- Շրջանային Վարչութիւնը կ'որոշէ Նաւասարդեան Խաղերու վայրը, թուականը եւ ժամը ինչպէս նաեւ որեւէ ուրիշ մարզախաղերու:

Մանօթ.-

- 1- Շրջանային Վարչութիւնը կը յառաջացնէ 3 տարուայ ծրագիր մը յաջորդ հիւրընկալ քաղաքներուն:
- 2- Շրջանային Մարզական Յանձնախումբը, կազմակերպիչ մասնաճիւղի մարզական յամձնախումբին հետ խորհրդակցաբար, կը կազմէ մրցումներու յայտագիրը:

Յօդ. 32.- Խաղերը հիւրընկալող մասնաճիւղը դիմումնագիրներ կ'ուղարկէ բոլոր մասնաճիւղերուն, ուր բացատրած կ'ըլլան մարզախաղերու տեսակները, դասակարգերը, մրցաշարքի թուականը, վայրը, ժամը եւ այլ մանրամասնութիւններ: Դիմումնագիրները ամբողջացնելէ եւ որոշուած թուականին վերադարձնելէ ետք հիւրընկալող մասնաճիւղին, իւրաքանչիւր մասնաճիւղ հաստատած կ'ըլլայ մրցաշարքի իր մասնակցութիւնը եւ մասնակցող անդամներուն թիւը:

Է.- ԿԱՍԵՑՈՒՄ ԿԱՍ ՊԱՐՏՈՒԱԾ ԲԱՑԱԿԱՅՈՒԹԵԱՆ ՊԱՏՃԱՌՈՎ

Յօդ. 33.- Մարզիկը կամ խումբը, բացակայութեան պատճառով պարտուած կը նկատուի, երբ՝

- Ա- Մրցումին չի ներկայանար:
- Բ- Մրցումին ճշդուած ժամէն 15 վայրկեան ուշ դաշտ կը ներկայանայ:
- Գ- Խումբը դաշտ կը ներկայանայ, մարզախաղին համար ճշդուած մարզիկներու նուազագոյն թիւէն նուազ մարզիկներով:

Յօդ. 34.- Խումբերը դաշտ պէտք է ներկայանան նուազագոյնը հետեւեալ թիւով մարզիկներով.-

- Տուօպով 7 մարզիկներով
- Պասքէթպով 4 մարզիկներով
- Վոլիպով 5 մարզիկներով
- Փինկ-փոնկ 2 մարզիկներով (խմբային)

Յօդ. 35.- Խումբ մը որ այլ եւ այլ պատճառներով դաշտ չի ներկայանար, պարտաւոր է \$250 տուգանք վճարել: Շրջանային Վարչութիւնը պարագաները քննելէ ետք կ'որոշէ տուգանքը:

Յօդ. 36- Երբ մրցաշարքը կէտերու դրութեամբ է եւ խումբ մը երկու անգամ պարտուած կը յայտարարուի բացակայութեան պատճառով, խումբը վերջնականապէս դուրս կը դրուի մրցաշարքէն: Այս պարագային, խումբին նախապէս կատարած բոլոր մրցումներու արդիւնքները կը ջնջուին:

Հետեւեալ կէտերու դասաւորումը կը գործածուի.-

- Առաջին կարգ 7 կէտ (խմբային)
- Երկրորդ կարգ 5 կէտ (խմբային)
- Երրորդ կարգ 4 կէտ (խմբային)

Կէտերու դասաւորումով կը պարզեւատրուին խմբային խաղեր, երկու խումբ կամ աւելի ըլլալու պարագային: Եթէ 2 խումբ Առաջին կարգի հաւասար կէտ ունին, երկու մասնաճիւղերը կը համարուին ախոյեան:

Ը.- ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՄԱԶԳԵՍՏ

Յօդ. 37.- Մրցաշարքերուն մասնակցող մարզիկները պէտք է կրեն իւրաքանչիւր մարզախաղի համար, մասնաճիւղի կողմէ յարմար նկատուած գոյներով համազգեստ, պայմանով, որ Հ.Մ.Ը.Մ.-ի նշանը ըլլայ համազգեստի կտրծքին:

Յօդ. 38- Այն մարզիկը որ չի յարգեր Յօդ. 37-ի տրամադրութիւնը, կը զրկուի մրցումի մասնակցելու իրաւունքէն:

Յօդ. 39- Երբ երկու մրցակից խումբեր կը կրեն նոյն գոյներով համազգեստ, հիւրընկալ խումբը պէտք է փոխէ իր համազգեստը: Երբ մրցումը տեղի կ'ունենայ չեզոք դաշտի վրայ, դաշտին ամենէն մօտ մասնաճիւղը պարտի փոխել իր համազգեստը: Իւրաքանչիւր խումբ որ կը մասնակցի մրցաշարքին, պարտի իր հետ ունենալ երկու համազգեստ:

Թ.- ՄԱՐԶԱԴԱՇՏ ԵՒ ՄԱՐԶԱԿԱՆ ԳՈՅՔԵՐ

Յօդ. 40.- Հիւրընկալ մասնաճիւղը պարտաւոր է ապահովել դաշտերու կանոնաւորութիւնը եւ հայթայթել անհրաժեշտ մարզական գոյքերը, որոնք վաւերացուած են Շրջանային Մարզական Յանձնախումբին կողմէ:

Յօդ. 41.- Հիւրընկալ մասնաճիւղը պէտք է տրամադրէ մարզական գոյքերը (գնդակներ, baton, stopwatch) Շրջանային Մարզական Յանձնախումբին հովանաւորած մարզախաղերուն:

Յօդ. 42.- Հիւրընկալ մասնաճիւղը պարտաւոր է ապահովել վկայեալ իրաւարարներ՝ բոլոր խաղերուն համար:

Յօդ. 43.- Բոլոր հիւրընկալող մասնաճիւղերը, մարզական հանդիպումներէ ետք պարտին ստեղծել ընկերային մթնոլորտ աւելի սերտ կապեր ստեղծելու համար մարզիկներուն միջեւ:

Յօդ. 44.- Բոլոր մասնաճիւղերը պարտաւոր են, Շրջանային Մարզական Յանձնախումբին փոխանցել իրենց լիկայի մրցախաղերուն յայտագիրը:

Յօդ. 45.- Բոլոր մասնաճիւղերը պարտաւոր են ապահովագրութիւն ունենալ իրենց մարզիկներու համար:

Ժ.- ՄՐՅՈՒՄՆԵՐՈՒ ԿԱՆՈՆՆԵՐ

ՖՈՒԹՊՈՒ

Յօդ. 46.-

Ա.- Ֆութպոլի խումբ մը մրցումներու կրնայ մասնակցիլ առաւելագոյնը 22 մարզիկներով, մէկ մարզիչով եւ մէկ պատասխանատուով:

Բ.- Այն ֆութպոլի խումբը որուն խաղացողը կարմիր քարտ (կամ երկու դեղին քարտ) կը ստանայ, կը թոյլատրուի առաւելագոյնը 21 խաղացողներու խումբով ներկայանալ յաջորդ խաղին:

Յօդ. 47.- Մրցումները կը վարեն ֆութպոլի իրաւարարներու ընկերակցութեան անդամ՝ մէկ իրաւարար եւ երկու (զծի) օգնական իրաւարարներ:

Յօդ. 48.- Ֆութպոլի մրցումներուն ժամերը հետեւեալներն են.-

Ծիլ 30 վայրկեանի կիսախաղեր

Պանդամ 35 վայրկեանի կիսախաղեր

Մնացեալ դասակարգերը 45 վայրկեանի կիսախաղեր

Ծանօթ.- Օղի աննպաստութեան պատճառով մրցումը կրնայ ընդհատուիլ (ջուրի դադար) ըստ իրաւարարներու դատողութեան:

Յօդ. 49.- Հաւասար արդիւնքի պարագային, խաղը կ'երկարաձգուի երկու կիսախաղերով իւրաքանչիւրը՝ 15 վայրկեան տեւողութեամբ, բացի, երբ խումբերէն մէկը goal արձանագրէ, այն ատեն խաղը կը վերջանայ: Կրկին հաւասարութեան պարագային, իւրաքանչիւր խումբ իրաւունք կը ստանայ 5 տուգանքային հարուածի (Penalty shot), 5 տարբեր մարզիկներով: Կրկին հաւասարութեան պարագային, խումբերը կը ստանան 3 տուգանքային հարուածի իրաւունք: Կրկին հաւասարութեան պարագային 1 տուգանքային հարուածի իրաւունք մինչեւ որ մէկ կողմը յաղթէ: Երբ խաղերը կ'ընթանան թուրնուայի ձեւով, հաւասարութեան պարագային օրէնքները հետեւեալներն են.-

1 - Ամենէն շատ կէտերը

2 - Goal differential (5 goal cap per game)

3 - Goals for (5 goal max per game)

4 - Head to head between the teams concerned

5 - Coin flip

Ծանօթ.- Երբ խաղերը կ'ընթանան թուրնուայի ձեւով, հաւասարութեան պարագային խաղերը չեն երկարաձգուիր:

Յօդ. 50.- Երբ մրցումը կ'ընդհատուի իրաւարարներու կողմէ, օղի աննպաստութեան կամ

այլ բանաուր պատճառներով, մրցումի արդիւնքը կ'որոշուի Շրջանային Մարզական Ցանձնախումբին կողմէ:

Յօդ. 51.- Իւրաքանչիւր խումբ իրաւունք ունի մրցումի ընթացքին կատարելու փոփոխութիւններ որքան որ կ'ուզէ:

Ծանօթ.- Վերոյիշեալ տրամադրութիւններէն դուրս , FIFA-ի օրէնքները կը կարավարեն Տութպոլի խաղերը բոլոր ժամանակներուն:

ԱԹԼԷԹ

Յօդ. 52.- Իւրաքանչիւր մարզիկ կրնայ մասնակցիլ առաւելագոյնը 3 անհատական մրցումներու, առաւել դրօշարշաւի:

Յօդ. 53.- Խաղերու յայտագիրին մաս կրնան կազմել հետեւեալ խաղատեսակները ըստ սեռի եւ տարիքի դասաւորումի, որոնց թեքնիք մանրամասութիւնները հիմնուած են National Federation of High School Rules-ի օրէնքներուն վրայ:

Յօդ. 54.- Մարզիկը եթէ ունենայ երկու սխալ սկզբնաւորութիւն, պարտուած կը համարուի այդ մասնայատուկ խաղին մէջ:

Յօդ. 55.- Իւրաքանչիւր մարզիկ կ'ունենայ ընդամենը երեք ոստում կամ նետելու իրաւունք, կատարած մարզախաղին մէջ:

Յօդ. 56 .- Իւրաքանչիւր մարզիկ պիտի ունենայ որոշուած թիւ մը նախքան իր մրցումը:

Յօդ. 57.- Մարզիկները պիտի կրեն իրենց որոշուած թուանշանը իրենց մարզաշապիկին առջեւի մասին վրայ:

ԱՐԱԿԱՆ

<u>Երեց</u>	<u>Կրտսեր</u>	<u>Պատանի</u>	<u>Ծիլ/Պանդամ</u>	<u>Վեթերան</u>
100 Մէթր վազք	100 Մէթր վազք	100 Մէթր վազք	60 Մէթր վազք	100 Մէթր վազք
200 Մէթր վազք	200 Մէթր վազք	200 Մէթր վազք	100 Մէթր վազք	200 Մէթր վազք
400 Մէթր վազք	400 Մէթր վազք	400 Մէթր վազք	200 Մէթր վազք	400 Մէթր վազք
800 Մէթր վազք	800 Մէթր վազք	800 Մէթր վազք		800 Մէթր վազք
1500 Մէթր վազք	1500 Մէթր վազք			1500 Մէթր վազք
4x100 Դրօշարշաւ	4x100 Դրօշարշաւ	4x100 Դրօշարշաւ	4x100 Դրօշարշաւ	4x100 Դրօշարշաւ
1 Քայլ ոստում	1 Քայլ ոստում	1 Քայլ ոստում	1 Քայլ ոստում	1 Քայլ ոստում
3 Քայլ ոստում	3 Քայլ ոստում			3 Քայլ ոստում
Բարձրացատք	Բարձրացատք			Բարձրացատք
Գունդ 5.44 ք.կ	Գունդ 4 ք.կ	Թեթեւ գնդակ	Թեթեւ գնդակ	Գունդ 5.44 ք.կ
Սկաւառակ 1.6 ք.կ	Սկաւառակ 1.6 ք.կ			Սկաւառակ 1.6 ք.կ
Նիզակ 0.8 ք.կ	Նիզակ 0.6 ք.կ			Նիզակ 0.6 ք.կ

ԻԳԱԿԱՆ

<u>Երեց</u>	<u>Կրտսեր</u>	<u>Պատանի</u>	<u>Ծիլ/Պանդամ</u>	<u>Վերերան</u>
100 Մեթր վազք	100 Մեթր վազք	100 Մեթր վազք	60 Մեթր վազք	100 Մեթր վազք
200 Մեթր վազք	200 Մեթր վազք	200 Մեթր վազք	100 Մեթր վազք	200 Մեթր վազք
400 Մեթր վազք	400 Մեթր վազք	400 Մեթր վազք	200 Մեթր վազք	400 Մեթր վազք
800 Մեթր վազք	800 Մեթր վազք	800 Մեթր վազք		800 Մեթր վազք
1500 Մեթր վազք	1500 Մեթր վազք			1500 Մեթր վազք
4x100 Դրօշարշալ	4x100 Դրօշարշալ	4x100 Դրօշարշալ	4x100 Դրօշարշալ	4x100 Դրօշարշալ
1 Քայլ ոստում	1 Քայլ ոստում	1 Քայլ ոստում	1 Քայլ ոստում	1 Քայլ ոստում
Բարձրացատք	Բարձրացատք			Բարձրացատք
Գունդ 4 ք.կ	Գունդ 4 ք.կ	Թեթեւ գնդակ	Թեթեւ գնդակ	Գունդ 5.44 ք.կ
Սկաւառակ 1.0 ք.կ	Սկաւառակ 1.0 ք.կ			Սկաւառակ 1.6 ք.կ
Նիզակ 0.6 ք.կ	Նիզակ 0.6 ք.կ			Նիզակ 0.6 ք.կ

Յօդ. 58.- Մրցումներու կէտերու արձանագրութիւնը կը կատարուի Հ.Ս.Ը.Մ.-ի կէտերու օրէնքներուն համաձայն:

Ծանօթ.-

Ա) Մրցումի ախոյեան կը հանդիսանայ այն մարզիկը, որ իր դասակարգին մէջ արձանագրած է առաւելագոյն կէտերը:

Բ) Մրցումի ախոյեան կը հանդիսանայ այն խումբը, որ իր դասակարգին մէջ արձանագրած է առաւելագոյն կէտերը:

Գ) Խմբային արդիւնքները որոշելու ընթացքին կը կիրարկուի հետեւեալ դրութիւնը.-

- Առաջին հանդիսացող մարզիկը կը ստանայ 7 կէտ:
- Երկրորդ հանդիսացող մարզիկը կը ստանայ 5 կէտ:
- Երրորդ հանդիսացող մարզիկը կը ստանայ 4 կէտ:
- Չորրորդ հանդիսացող մարզիկը կը ստանայ 3 կէտ:
- Հինգերորդ հանդիսացող մարզիկը կը ստանայ 2 կէտ:
- Վեցերորդ հանդիսացող մարզիկը կը ստանայ 1 կէտ:

Դ) Մրցումներու աւարտին, երբ երկու մարզիկներու կամ խումբերու արձանագրած կէտերը հաւասարին, այդ պարագային անոնք հաւասարապէս կը բաժնեն համապատասխան դիրքաւորումը:

Ծանօթ.- Վերոյիշեալ պայմաններէն տարբեր պարագաներուն, National Federation of High School Rules-ի օրէնքները ի զօրու են բոլոր ժամանակներուն:

ՊԱՍՔԷԹՊՈՒ

Յօդ. 59.-

Ա.- Պասքէթպոլի խումբ մը կը բաղկանայ առաւելագոյնը 14 մարզիկներէ, մէկ մարզիչէ եւ մէկ պատասխանտուէ:

Բ.- Այն պասքէթպոլի խումբը որուն խաղացողը կը ստանայ երկու դիտումնաւոր յանցանքներ (technical fouls), կը թոյլատրուի 13 խաղացողներու խումբով մասնակցիլ յաջորդ խաղին:

Գ.- Միայն մէկ մարզիչ եւ մէկ պատասխանատու արտօնութիւն ունին խումբին հետ

ըլլալու: Միայն մարզիչը կրնայ ոտքի կենալ խաղի ժամանակ: Եթե մարզիչ մը կամ պատասխանատու մը թեքնիք յանցանք ստանայ խաղի մը ընթացքին, մարզիչը, պատասխանատուն եւ ամեն մարզիկներ պէտք է նստած մնան այդ խաղին ամբողջ տևողութեան:

Յօդ. 60.- Մրցումները կը վարեն պասքէթպոլի իրաւարարներու ընկերակցութեան անդամ երկու իրաւարարներ:

Յօդ. 61.- Ամեն մրցումները պէտք է ըլլան 20 վայրկեանի կիսախաղեր, ժամը շարունակուելով բացի կիսախաղերուն վերջին 2 վայրկեանները:

Յօդ. 62.- Մրցումներու արդիւնքները պէտք է արձանագրուած ըլլան պասքէթպոլի պաշտօնական թուղթերու վրայ, եւ մրցումին աւարտին, ստորագրուած ըլլան իրաւարարներուն կողմէ:

Յօդ. 63.- 30/45 երկվայրկեան ժամանակ պահելու դրութիւնը (shot clock) պիտի չգործադրուի:

Յօդ. 64.- Երեք կէտանոց նետուածք (three-point shot) պիտի թոյլատրուի:

Յօդ. 65- Երեք ազատ տուգանգային նետուածք կը տրուի այն պարագային երբ արգելք կը դրուի երեք կէտանոց նետուացքի մը:

Յօդ. 66.- Խումբ մը պիտի բաղկանայ չորս խաղացողներէ, խաղը սկսելու համար, կը պահանջուի երեք խաղացողներով խումբ մը պասքէթպոլի խաղը շարունակելու համար:

Յօդ. 67.- Իւրաքանչիւր խումբի պիտի թոյլատրուի 2 դադար ամեն կիսախաղի ընթացքին. մեկ դադար կարելի է պահել յաւելեալ խաղի (overtime) պահուն, եւ խումբերը կը ստանան մեկ դադար իւրաքանչիւր յաւելեալ խաղի ընթացքին: Դադարը պէտք է տեւէ վաթսուն երկվայրկեան, այդ միջոցին ժամացոյցը պէտք է կենայ աշխատելէ:

Յօդ. 68.- Յաւելեալ խաղը պիտի տեւէ հինգ վայրկեան առանց ժամացոյցը կեցնելու բացի վերջին երկու վայրկեաններուն դադարի ժամանակ: Յաւելեալ խաղեր կ'արտօնուին մինչեւ մեկ խումբը հասնի յաղթանակի:

Յօդ. 69.- Խաղացող մը խաղէն դուրս կը դրուի երբ կը գործէ հինգ անձնական յանցանքներ: Խաղացող մը վերջնականապէս խաղէն դուրս կ'արտաքսուի, երկու դիտումնաւոր յանցանքներ (technical foul) գործելէ ետք: Արտաքսուող խաղացողը բնականաբար չի կրնար յաջորդ խաղին մասնակցիլ:

Յօդ. 70.- Ազատ տուգանային նետուածքներ (free throws) կը շնորհուի երբ խումբ մը 6 յանցանքէ աւելի կը գործէ իւրաքանչիւր կիսախաղին մէջ:

Ծանօթ.- Վերոյիշեալ պարագաներէն դուրս, I.C.B.O. (High School)-ի օրէնքները ի գորտու են պասքէթպոլի խաղերուն:

Վոլիպոլ

Յօդ. 71.-

Ա.- Վոլիպոլի խումբ մը մրցաշարքի կրնայ մասնակցիլ առաւելագոյն 14 մարզիկներով, մէկ մարզիչով եւ մէկ պատասխանատուով:

Յօդ. 72.- Խաղը սկսելու համար, խումբը պիտի բաղկանայ նուագագոյնը 5 խաղացողներէ, կը պահանջուի նուագագոյնը երեք խաղացող որպէսզի խումբը շարունակէ խաղալ:

Յօդ. 73.- Իւրաքանչիւր խաղ պիտի վարէ նուագագոյնը մէկ իրաւարար վաւերացուած հիւրընկալ քաղաքի մարզական մարմնին կողմէ: Իւրաքանչիւր խաղին, երկու կամաւոր գիծի դատաւորներ պէտք է գտնուին, իրաւարարներուն օգնելու:

Յօդ. 74.- Իւրաքանչիւր մրցում կը պարփակէ 3 խաղեր, իւրաքանչիւր խաղ 25 կէտ: Մրցումի յաղթական կը հանդիսանայ այն խումբը որ կը շահի երեք խաղերէն երկուքը, բացի տողոց ֆինալի մրցումը, ուր յաղթական կը հանդիսանայ այն խումբը, որ կը շահի հինգ խաղերէն երեքը:

Յօդ. 75.- Խաղը կը շահի այն խումբը որ կ'արձանագրէ 25 կէտ, բացի այն պարագային երբ երկու խումբերը կ'արձանագրեն 24 կէտ, յետոյ յաղթական կ'ըլլայ այն խումբը որ կ'արձանագրէ 2 կէտ միւս խումբէն աւելի:

Յօդ. 76.- Մրցումներուն արդիւնքները պէտք է արձանագրուած ըլլան վոլիպոլի պաշտօնական թուղթերու վրայ եւ պէտք է ստորագրուած ըլլան իրաւարարներուն կողմէ խաղի աւարտին:

Յօդ. 77.- Երբ խումբ մը կը հասնի 13 կէտի մրցումի վերջին (երրորդ կամ հինգերորդ) խաղին, խումբերը պէտք է տեղերնին փոխեն, չփոխելու պարագային անմիջապէս որ իրաւարարները անդրադարնան, տեղերնին պէտք է փոխեն, արդիւնքները պէտք չէ փոխուին եւ պէտք չէ բողոքելու պատճառ ըլլան:

Յօդ. 78.- Խաղացող մը խաղին մտնելու երեք անգամ իրաւունք ունի, խաղին սկիզբը առաջին մուտքը կը համարուի:

Յօդ. 79.- Իւրաքանչիւր խումբ խաղի ընթացքին, երկու անգամ դադար (time out) առնելու իրաւունք ունի, յաւելեալ դադարներ կ'արտոնուին երբ խումբերը կ'արձանագրեն 24 կէտ, իւրաքանչիւր դադար պէտք չէ անցնի 60 երկվայրկեանը:

Յօդ. 80.- Դեղին կամ կարմիր քարդեր կը տրուին անվայել յանցանքներու պարագային (conduct fouls). նման յանցանքներ պէտք է արձանագրուին իրաւարարներուն կողմէ եւ ներկայացուին դատական մարմնին սերտելու եւ պատշաճ որոշումը գոյացնելու համար, արտաքսուող խաղացողը պէտք է գրկուի յաջորդ խաղը խաղալէն:

Ծանօթ.- Վերոյիշեալ պարագաներէն դուրս թէքնիք մանրամասնութիւններու համար U.S.V.B.A.-ի օրէնքները ի գօրու են:

Փինկ- Փոնկ

Յօդ. 81.- Փինկ-Փոնկի խումբ մը մրցաշարքի կրնայ մասնակցիլ առաւելագոյնը 5 մարզիկներով, մէկ մարզիչով եւ մէկ պատասխանատուով:

Յօդ. 82.- Մրցումը կը վարէ մէկ իրաւարար, նշանակուած Շրջանային Մարզական Յանձնախումբին եւ կազմակերպիչ մասնաճիւղին կողմէ:

Յօդ. 83.- Իւրաքանչիւր մրցում կը պարփակէ 3 խաղեր, իւրաքանչիւր խաղ 21 կէտ: Մրցումի յաղթական կը հանդիսանայ այն մարզիկը, որ կը շահի երեք խաղերէն երկուքը:

Յօդ. 84.- Խաղը կը շահի այն խաղացողը որ առաջին անգամ կ'արձանագրէ 21 կէտ, երբ երկու խաղացողները կարձանագրեն 20 կէտ, կը յաղթէ այն խաղացողը որ ամենէն առաջ կ'արձանագրէ 2 կէտ միւս խաղացողէն աւելի, կամ 25 կէտ:

Յօդ. 85.- Խաղը սկսողը պէտք է գնդակը դնէ ազատ ձեռքի ափին վրայ որ պէտք է ըլլայ կայուն, բաց եւ տափակ, մատները իրարու կպած եւ բթամատը ազատ:

Յօդ. 86.- Երբ գնդակը կը զարնուի սերվիսի ընթացքին, գնդակը պէտք է ըլլայ սեղանի գիծէն ետին, բայց խաղացողի մարմնէն թեւէն եւ գլուխէն առաջ որոնք ամենէն հեռու կը գտնուին սեղանի ուղկանէն:

Յօդ. 87.- Մրցումի վերջին խաղին, խաղացողները, տեղերնին կը փոխեն երբ առաջին խաղացողը 10 կէտ կ'արձանագրէ:

Յօդ. 88.- Խաղացողին շապիկը եւ տաբատը պէտք է ըլլան միագոյն կամ երկու գոյն բացի ճերմակէ:

Յօդ. 89.- Իւրաքանչիւր խմբական հանդիպում կը բաղկանայ երեք մրցումներէ հետեւեալ ձեւով եւ պայմաններով.-

Ա. Մրցում- անհատական

Բ. Մրցում- գոյգ

Գ. Մրցում- անհատական

Ծանօթ.- Խմբական յաղթանակը կ'ապահովէ այն խումբը, որ կը շահի երեք

խաղերն են երկուքը:

Օսնթ.- Վերոյիշեալ պարագաներն դուրս, թեքնիք մանրամասնութիւններու համար, փինկ-փոնկի ընկերակցութեան U.S.T.T.A.-ի օրէնքները ի զօրու են:

ԹԵՆԻՍ

Յօդ. 90.- USTA-ի օրէնքները կը գործածուին թենիսի մրցումներուն:

Յօդ. 91.- Խաղացողները աստիճանները պիտի որոշուին համաձայն իրենց մարզական կարողութիւններուն եւ հաւանութեամբ մրցաշարքի տնօրէնութեան եւ Շրջանային Մարզական Յանձնախումբին:

Յօդ. 92.- Առաջին հանգրուանը (round) պիտի ըլլայ 10 խաղերով (set): Առաջին 10 խաղեր շահողը, յաղթական կը համարուի:

Յօդ. 93.- Մնացեալ հանգրուանները պիտի ըլլան 3 խաղերէն 2-ը:

Յօդ. 94.- Մետալներ պիտի տրուին, առաջին, երկրորդ եւ երրորդ հանդիսացողներուն:

ԼՈՂ

Յօդ. 95.- Ամերիկայի Միացեալ Նահանգներու լողարշաւի օրէնքները պիտի գործադրուին լողարշաւի մրցումներուն:

Յօդ. 96.- Տոնց եւ աղջկանց մրցաշարքերուն ձեւերն են.-

- 25 yard free
- 25 yard free fly
- 25 yard breast
- 25 yard back
- 25 yard free
- 4x 25 yard free.

ՃԱՏՐԱԿ

Յօդ. 97.- FIDE-ի օրէնքները պիտի գործադրուին ճատրակի մրցումներուն:

Յօդ. 98.-

Ա. Ճատրակի մրցումներուն բաժանումներն ու տարիքային դասաւորումները պէտք է պատրաստէ Շրջանային Մարզական Յանձնախումբը, մասնակցողներուն թիւին համեմատ: Եթէ կարելի է, մրցումները պէտք է բաժնուին 2 մասի՝ «18 տարեկանէն վար» եւ «18 տարեկան եւ վեր»:

Բ. Շրջանային Մարզական Յանձնախումբը կրնայ որոշել մրցաշարքերուն 1 կամ 2 պարտութեամբ դուրս դրուիլ:

Գ. Առաջին, երկրորդ եւ երրորդ յաղթականներուն մասնաճիւղերը պիտի ստանան կէտեր ըստ յօդուած 58-ի:

Յօդ. 99.-

Ա. Ամեն խաղացող առաւելագոյնը 20 վայրկեան ունի 1 խաղի ընթացքին: Ժամը կը պահուի timer/stopwatch-ով: Շարժում մը ժամի սահմանափակում չունի մինչեւ այն ատեն որ մրցումը առաւելագոյնը 20 վայրկեանը կը տեսէ:

Բ. Եթէ խաղացող մը խաղի ժամկէտը անցնի, կը պարտուի:

Յօդ. 100.-

Ա. Երբ խաղացող մը դպնայ իր խաղաքարին, պէտք է շարժէ այդ խաղաքարը եթէ շարժումը օրինաւոր է:

Բ. Եթէ խաղացող մը հակառակորդին խաղաքարը դպնայ պէտք է գրաւէ այդ խաղաքարը:

Գ. Եթէ խաղացող մը խաղաքարը ձգէ, պէտքէ նոյն տեղը ձգէ: Խաղացող մը որ կը փափաքի միայն խաղաքարին տեղը շտկել, պէտք է յայտնէ նպատակը դպնալէն առաջ, ընդհանրապէս “adjust” ըսելով:

Յօդ. 101.- Երրորդ անձ մը չի կրնար միջամտել, կամ խաղին նկատմամբ թելադրանքներ տալ խաղացողներուն:

Ի. ՄՐՅԱՆԱԿՆԵՐ

Յօդ. 102.- Մրցաշարքի ախոյեան հանդիսացող խումբերու եւ մարզիկներու բաժակներու եւ մետալներու բաշխումը կը կատարուի հետեւեալ ձևով.-

Ա) Բաժակ կը ստանայ իրաքանչիւր մարզախաղի իւրաքանչիւր դասակարգի ախոյեան խումբը:

Բ) Ախոյեան խումբերու մարզիկները կը ստանան ոսկէ մետալներ:

Գ) Երկրորդ հանդիսացող խումբերու մարզիկները կը ստանան արծաթէ մետալներ:

Դ) Անհատական խաղերու մէջ առաջին, երկրորդ եւ երրորդ հանդիսացող մարզիկը կը ստանայ ոսկեայ, արծաթեայ եւ պրոնզէ մետալներ:

Լ. ՄՐՅՈՒՄՆԵՐՈՒ ՆԵՐԿԱՅՈՒԹԻՒՆ ԵՒ ՃՇՂԱՊԱՀՈՒԹԻՒՆ

Յօդ. 103- Մարզիկ մը, որ միաժամանակ կը մասնակցի, վազքի, ոստումի, եւ կամ արձակման մրցումներու (նիզակ, գունդ եւ սկաւառակ) պարտի մասնակցիլ նախ վազքին:

Խ. ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ

Յօդ. 104.- Մրցումներու ընթացքին կարգապահական դիտողութիւն կամ պատիժ կը տնօրինուի իրաւարարին կողմէ համաձայն մարզախաղի օրէնքներուն:

Յօդ. 105.- Երեք անձերէ բաղկացած դատական կոմիտէ մը կը նշանակուի խաղերը սկսելէ առաջ, դատական կոմիտէն կը բաղկանայ հետեւեալներէ.-

Ա) Անդամ մը Շրջանային Վարչութենէն:

Բ) Անդամ մը Շրջանային Մարզական Յանձնախումբէն:

Գ) Անդամ մը հիւրընկալ շրջանէն:

Ծանօթ.- Խաղերուն մասնակցող մարզիկ մը դատական կոմիտէին ադնամ չի կրնար ըլլալ:

Յօդ. 106.- Հետեւեալ քայլերը կ'առնուին, արգիլելու համար ոչ մարզավայել ընթացք: Իրաւարար մը առանց նախկին ազդարարութեան կրնայ արտաքսել, մարզիչ մը, խումբի ներկայացուցիչ կամ մարզիկ մը եթէ.-

Ա) Յանձաւոր է վայրագ վարուելակերպի կամ լուրջ անպարկեշտ խաղի պատճառով:

Բ) Անվայել է խօսքով կամ վերաբերմունքով:

Գ) Կը շարունակէ ըլլալ անպարկեշտ ազդարարութիւն ստանալէ ետք:

Յօդ. 107.- Իւրաքանչիւր մարզիկ, խումբ, մարզիչ կամ յանձնախումբ ենթակայ է կարգապահական որոշումներու Շրջանային Վարչութեան կողմէ, ըստ Հ.Մ.Ը.Մ.-ի կարգապահական օրէնքներու կանոնագրին համաձայն:

Յօդ. 108.- Այն մարզիկը որ կը ստանայ երկու դեղին քարդ/ դիտումնաւոր յանցանքներ մրցաշարքին ընթացքին, կը զրկուի յաջորդ նոյն տեսակի խաղին մասնակցելէ, կարմիր քարդ ստացողը նոյնպէս: Եթէ կախակայուող մարզիկը անօրէն կերպով մասնակցի անհատական մրցումի մը որակազրկուած կը նկատուի: Եթէ մարզիկ մը անօրէն կերպով մասնակցի խումբի մը մրցումին, ամբողջ խումբը որակազրկուած կը նկատուի:

Յօդ. 109.- Խաղացող մը որ երկու արտաքսում ունի մրցաշարքի ընթացքին բնականաբար կը զրկուի յաջորդ մրցումներուն մասնակցելէ:

Ծ. ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ

Յօդ. 110.- Դատական կոմիտէն կրնայ ընդունիլ վերաքննութեան դիմումնագիրը որ կը բողոքէ մրցումի մը արդիւնքին համար, երբ որ մրցումին օրէնքները խախտուած կը համարուին: Ամէն պարագայի, դիմումնագիրը անընդունելի կ'ըլլայ երբ խաղի պատասխանատուներուն կամ դատական կոմիտէի դատական վճիռը վիճելի կը դառնայ:

Յօդ. 111.- Պաշտօնական բողոքագիրը, ստորագրուած խումբի մը մարզիչին, մասնաճիւղին մարզական պատասխանատուին կամ մասնաճիւղի վարչութեան անդամի մը կողմէ, պէտք է ներկայացուի վիճելի խաղին աւարտէն վերջ յաջորդ կէս ժամուայ ընթացքին եւ \$50 անվերադարձ վճարումով:

Յօդ. 112.- Բողոքագիրը եւ դրամը պետք է յանձնուին դատական կոմիտեի անդամներէն մէկուն եւ կամ Շրջանային Մարզական Յանձնախումբի անդամներէն մէկուն:

Յօդ. 113.- Դատական կոմիտեի որոշումը պետք է տրուի խումբի մարզիչին, մասնաճիւղին մարզական յանձնախումբի ատենապետին կամ մասնաճիւղի վարչութեան անդամին կարելի եղածին չափ շուտ նախ քան վիճահարոյց խումբերուն նոր խաղերու վերսկսիլը: Այս որոշումը պետք է ըլլայ վերջնական եւ անփոփոխելի առանց կրկին վերաքննութեան:

Կ. ԳՆԱՀԱՏՈՒՄ

Յօդ. 114.- Շրջանային Մարզական Յանձնախումբը, համախորհուրդ կազմակերպիչ մասնաճիւղի մարզական յանձնախումբին, կը գնահատէ մարզիկները հետեւեալ պատիւներով.-

Ա) Շրջանի լաւագոյն մարզիկը (վազք, ոստում, արձակում) մարզախաղերուն (ամենաշատ կէտեր):

Բ) Շրջանի լաւագոյն մասնաճիւղը (վազք, ոստում, արձակում) մարզախաղերուն (ամենաշատ կէտեր):

Գ) Շրջանի ամենէն շատ նուիրուած մարզիկը բոլոր մարզախաղերուն մէջ:

Դ) Շրջանի լաւագոյն մասնաճիւղին բաժակ կը տրուի ամենէն շատ կէտեր ունենալուն համար բոլոր խմբային մրցումներուն:

Հ. ԻՐԱԻԱՐԱՐՆԵՐ

Յօդ. 115- Բոլոր մրցումները պետք է ունենան պաշտօնական իրաւարարներ:

Ծանօթ- Իրաւարարներու ցանկը հետեւեալն է.-

Ա- Իրաւարարապետ:

Բ- Իրաւարար ոստումներու:

Գ- Իրաւարար արձակումներու:

Դ- Գլխաւոր ժամապահ վազքերու:

Ե- Քարտուղարներ արձանագրութիւններու:

Զ- Թէքնիք պատասխանատու:

Է- Խաղերու յայտագրերու պատասխանատու:

Ձ. ՄԱՐԶԻԿՆԵՐՈՒ ՓՈԽԱՆՅՈՒՄՆԵՐ

Յօդ. 116.- Մարզիկ մը կրնայ խաղալ ուրիշ մասնաճիւղէ մը միայն խմբային մրցախաղի ընթացքին, երբ իր մասնաճիւղին մէջ այդ մրցախաղին մասնակցող խումբ չկայ, այդ պարագային պետք է առնուին հետեւեալ քայլերը.-

Ա) Այն մասնաճիւղը որուն ենթակայ է փոխանցուող մարզիկը, նամակ մը պետք է

յղէ Շրջանային Վարչութեան, արտօնութիւն հայցելով խաղալու ուրիշ մասնաճիւղի խումբէն: Նամակը պէտք է արտօնէ անդամը խաղալու ուրիշ մասնաճիւղի խումբէն:

- Բ) Այն մասնաճիւղը ուր՝ փոխանցուող մարզիկը կ'ուզէ խաղալ, նամակ մը պէտք է յղէ Շրջանային Վարչութեան խնդրելով որ այդ մարզիկը խաղայ իր խումբերէն մէկուն մէջ:
- Գ) Փոխանցման պահանջները պէտք է ներկայացուին Շրջանային Վարչութեան, մրցաշարքի ցուցակը չամբողջացած: Շրջանային Վարչութիւնը պէտք է տեղեկացնէ երկու մասնաճիւղերուն իր վաւերացումը:
- Դ) Եթէ մասնաճիւղը ունի խումբ մը՝ մարզիկին դասակարգին յարմար, այդ մարզիկը չի կրնար փոխանցուիլ աւելի բարձր դասակարգի նոյն մարզական խաղին ուրիշ մասնաճիւղի մը:
- Ե) Խումբ մը կը նկատուի «խառն խումբ» (“Mixed Team”) այն պարագային երբ.-
 - Պասքէթպոլի կամ վոլիպոլի խումբը ունենայ երկու խաղացողէ աւելի փոխանցուած խաղացողներ:
 - Ֆութպոլի խումբը ունենայ չորս խաղացողէ աւելի փոխանցուած խաղացողներ:
- Զ) Խառն Խումբ մը կրնայ տարիքային դասակարգի մէջ բարձրանալ, սակայն կը կորսնցնէ իր մրցաշարքի կէտերը:
- Է) Ամէն Խառն Խումբերուն ներփակումը պէտք է վաւերացնէ Շրջանային Մարզական Յանձնախումբը:

Յօդ. 117.- Մարզիկ մը Հ.Մ.Ը.Մ.-ի տարբեր շրջաններէ կրնայ խաղալ Միացեալ Նահանգներու Արեւելեան Շրջանի Նաւասարդեան խաղերուն, միայն խմբային խաղերուն մէջ: Երկու մասնաճիւղերը, Շրջանային Վարչութեան միջոցով պէտք է հետեւին նոյն քայլերուն որոնք ընդգծուած են Յօդուած 116-ին մէջ:

Դ. ԸՆԴՀԱՆՈՒՐ

Յօդ. 118.- Ներքին Մարզական Կանոնագիրը պատրաստուած է ապահովելու համար արդար, ապահով եւ արդիւնաւետ մարզական գործունէութիւն: Կարգ մը պարագաներուն, Շրջանային Մարզական Յանձնախումբը կրնայ վերացնել կարգ մը օրէնքներ, մրցաշարքին եւ մասնակցողներուն շահերուն համար: Եթէ Շրջանային Մարզական Յանձնախումբը որոշէ օրէնք մը վերացնել որեւէ պատճառով, պէտք է ստանայ Շրջանային Վարչութեան վաւերացումը: